

Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարվան 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ»,
Կամ Tiflis, Rédaction «Mschak»,
Տ է Լ Ե Ք Օ Ն № 253.



Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են
խրաքանչիւր տողատեղին 10 կոպեկով.
Տ է Լ Ե Ք Օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գեղեցիկ ծրագիր.—Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Արձագանքներ. Դէպի Սալմաստ. Նամակ Բա-
գրուի. Նամակ Խմբագրութեան. Նամակ Խմբ-
ագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արձագանքներ. Ներքին լուրեր.—
ՏԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻ-
ՐԱՅՏԱՐ. Հայ նկարիչները Պարիզի գեղարուես-
տական ցուցահանդէսին մէջ:

ԳԵՂԵՑԻԿ ԾՐԱԳԻՐ

Իրական կեանքը խորասկզբի գեղեցիկ
ծրագրերէն մէկը, որը թուում էր ոչ
միայն գրաւիչ, այլ և պարունակող իր
մէջ ապագայ ընդարձակ զարգացման սաղ-
մեր: Մեր խօսքը այն փորձերի մասին է,
որ արվեստի Ռուսաստանի շատ կողմե-
րում պատուաստելու հասարակական
գործունէութեան սկիզբները գիւղա-
կան երկրագործութեան ասպարէզում:
Արդարեւ, որքան գեղեցիկ բան է ընտ-
րել իւրաքանչիւր գիւղում մի կտոր հող
և այդ հողը մշակել ընդհանուր գիւղա-
կան միջոցներով: Այդ հողի արգիւնքը կա-
րելի է յատկացնել գիւղական ընդհանուր
պէտքերի և կարիքների համար, օրինակ,
տալ պարտքերի և հարկերի մի մասը, շի-
նել և պահպանել հասարակական շտեմա-
րանները, կազմել գումար փոխառութիւն-
ների համար և այլն:

Մենք մի անգամ առիթ ենք ունեցել
խօսելու այն անադոլութիւնների մասին,
որոնք հանդիպեց այդ ծրագրերը գործնա-
կան կեանքում: Այժմ մեր առաջն է մի
տեղեկագիր, որ պարունակում է իր մէջ
նիւթեր այն մեծ փորձերի մասին, որ ա-
րել է Ռուսաստանի նահանգներից մէկը
այս ասպարէզում, հարկադրելով, որ հասա-
րակական վարուցանքս անեն 1677 գիւղա-
կան հասարակութիւն, այն է ամբողջ նա-
հանգի գիւղական համայնքների երեք բա-
նուրդ մասը: Իսկ յիշուի մի նշանաւոր
փորձ է իր չափազանց մեծ զիրքով: Այդ
գործին մասնակցում են եղել 787510 գիւղ-
ացի, կամ ամբողջ գիւղական ազգաբնա-
կութեան տղամարդկանց 64 0/0-ը: Փորձե-
րը տասնեակ տարի կրկնվելուց յետոյ՝ բե-
րին այն երազագիտութեան, որ հասարա-
կական վարուցանքները համակրութիւն

չեն գտնում գիւղական ազգաբնակչութեան
ընդհանուր և չեն տալիս սպասած արդիւն-
քները: Գիւղացիները նայում են նրանց
վրա, իբր ստիպողական, հարկադրեալ մի
պարտաւորութեան վրա, որը և կատա-
րում են թերի, վատ և անբաւարար:

Դիտողութիւնները ցոյց տուին, որ հա-
սարակական վարուցանքներում հողը վատ
է մշակվում, վատ է պարտաւորացվում,
վատ է սերմանվում, ուստի և արդիւնքը
ստացվում է քիչ և վատ յատկութեան:
Այն ժամանակ, երբ մասնաւոր գիւղացու
հողերում հոնձը միջին թւով տալիս է
36—40 պուդ հացահատիկ, հասարակա-
կան վարուցանքի դեռեալից ստաց-
վում է միայն 24 պուդ, միջին թւով
40—70 0/0-ով անելի պակաս:

Գիւղական հասարակութիւնը չէ սի-
րում հասարակական վարուցանքները, ո-
րոնք պահանջում են համերաշխութիւն,
աշխատանքի հաւասար բաժանում, երկ-
րագործական գործիքների և լծկան գրաս-
տիկների արած գործի ձիւղ հաշուեկշիւ, այդ-
բոլորի հետ միասին պարտաւորեալ աշխա-
տանք, նշանակած օրեր և ժամեր, որոնք
ծանրութիւն են պատճառում գիւղացի-
ներին: Այդպիսով հասարակական վարու-
ցանքները իրան ներկայ կազմակերպու-
թեամբ դատաւարտված են անադոլու-
թեան:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԱՆԻՐ
LVII

Դուք, երեւի, տեսած կը լինէք այն կիսա-
ապր-կիսաֆորացները, որոնցով մեր երկրի
թուրքերը ամառը չուծ են, «քօլու» են» սա-
րերը:

1881 թ.ին, երբ ուսմանը տիրեցին Անդր-
կասպեան երկրի Ախալ—Թէքէ օսղիսին, Ախա-
բազը այդ օսղիսի գլխաւոր աւանն էր եւ
բաղկացած էր թափառական թուրքմէներին
պատկանող այդպիսի 500 սայիւրից:

Ան աղ նոյն Ախաբազում, որ սրանից
քսան տարի առաջ կիսափայրենի դրութեան
մէջ էր, հայ կանայք այս տարի հիմնել են
«Ախաբազի հայ-ուսաւորչական կանանց բա-
րեգործական ընկերութիւն», ինչպէս ընթեր-
ցողները կարգադրեցին «Մշակի» երէկվայ համարում:

Բուն մեծ մասը gros bonnet-ներ են, գեղա-
րուեստից վարժարանի դասաւանդներ, հետեւա-
բար պաշտօնական արուեստագէտներ են, ո-
րոնք հարկաւորաբար դժգոհութեամբ ու ծաւա-
ւալով կը նային արուեստի այն բոլոր արտա-
յայտութիւններու վրա, որ իրենց ըմբռնելու
և դատելու եղանակէն կը հեռանան: Արուես-
տին միակ դատաւորները իրենք էին: Ամեն
տարի իրենց կազմակերպած ցուցահանդէսները
իրենց հանձարին ու իրենց գործերուն փառա-
ւորումին միայն նուիրված էին: Որովհետեւ
իրենցմէ կազմված jury մը հազու կը հաճէր
ընդունել իրենց մատուռէն դուրս արուեստի
մը ու արուեստագէտներու գոյութիւնը:

Այս տարի ու յամառ անթոյլտուութիւնը
մղեց խումբ մը արուեստագէտներ նոր ընկե-
րութիւն մը կազմելու: Այդ վայրկեանէն ծը-
նունդ առաւ Գեղարուեստից ազգային ընկե-
րութիւնը: Այս վերջինը ոչ միայն թուականով
այլ ձգտումով ալ նոր է: Այսուհանդերձ կարե-
լի է վերանայ, որ ինք ալ իր անդրադարձնէ մե-
զագրված թերութիւններուն մէջ չիմայ:

Փրանսայի արուեստագէտներու ընկերութիւ-
նը պաշտօնական արուեստը կը ներկայացնէր,
իր նկարչահանդէսներուն բացումը կը կատար-
վէր պաշտօնապէս՝ հանրագիտութեան նախա-
գահին եւ իրենց կուրծքը քանի մը տեսակ
պատուանշաններով ծածկած պարոններու ներ-
կայութեամբ: Գեղարուեստից ազգային ընկե-
րութիւնը այսօր իր մրցակցին նախան-
շելու մեծ պատճառ մը չունի ժամա-
նակին հետ իրեն ալ եկաւ պաշտօնականու-

Աւելորդ է ասել, որ այդ պատիւ է բերում
հայ կանանց ընդհանրապէս եւ մասնաւորապէս
Ախաբազի հայուհիներին, որոնք արժանաւոր
հետեւողներ հանգիստացան թաւրիղի հայու-
հիներին:

Այնտեղ, ուր տիրում է խաւարը, ուր ընկ
ժողովուրդը դեռ բողբոջի դուրս չէ եկել
վարչութիւնից, հայ կինը իր թոյլ բազմու-
նեղով տանում է ճամբրիտ քաղաքակրթու-
թեան եւ մարդասիրութեան աւետարանը ու
կատարում է այն դերը, որ պատմութիւնը
վերապահել է հայերին, այն է՝ լինել միջնորդ
լուսաւոր Եւրոպայի եւ խաւար Ասիայի մէջ:

Մագուսով ցեղակից հարօպացիներին եւ մի-
ջանի անդամ մըրոված՝ արեւմտեան քաղա-
քակրթութեան աւազանում, մենք դժբաղդու-
թիւն ենք ունեցել ապրել ասիական ժողո-
վուրդների մէջ, վիճակակից լինել նրանց եւ
երկար ժամանակ կրել նրանց լուծը: Պատ-
մութիւնը այդպիսով մեզ կապել է նրանց հետ,
եւ դարեւոր ընթացքում մենք մի տեսակ եւ-
րոպացի գաղթականներ ենք եղել Ասիայի
խուլ անկիւններում:

Հասարակապէս լաւ հասկանալով եւրոպացու
եւ ասիացու հոգեբանութիւնը, ընդունակ լի-
նելով վերցնել նրանցից այն, ինչ լաւ է նրանց
մէջ, իտեղով թէ սրանց, թէ նրանց լեզունե-
րով, ըմբռնելով թէ արեւելեան, թէ արեւմտեան
գեղարուեստը, մենք, կարծէք, յատկապէս պատ-
րաստված ենք կուլտուրայի գիւղերը, քաղա-
քակրթութիւն տարածողներ լինելու մեր հա-
րեան ասիական ցեղերի մէջ:

Դրանում է, իմ կարծիքով, մեր միջազգային
դերը, որ, դժբաղդաբար, մենք չառ թոյլ
կերպով ենք կատարում, եթէ չը հաշուենք
Թաւրիղի կամ Ախաբազի հայուհիների նման
սակաւաթիւ երեւոյթներ:

Այդպիսով, կրկնում եմ, Ախաբազի հայու-
հիները ոչ միայն պարագայում են բարեգոր-
ծութեամբ, որ իրանց անմիջական նպատակն
է, այլ եւ մի գործ են կատարում, որ պար-
ծանք կարող է լինել հայերիս համար:

Հասարակական ընազդով օժտված հայուհի-
ները եւ գաղափարով ոգեւորվող ուսուցչուհի-
ներ—ան աղբեր են մեր միաթոնները արե-
ւելքում:

Եւ թող օրհնված լինի այդ միաթոնների
գործը:

Տ. Յ.

Թիւնը իր ցուցահանդէսներուն բացումը նոյն-
քան չեղով կը կատարուի: Հանրապետութեան
նախագահը իրեն ալ կը բերէ իր բարձր ան-
ձին փայլը: Հետաքրքիրներուն համար թերեւս
աւելորդ չըլլայ ըսել, թէ այս երկու ընկերու-
թիւններէն զատ, վերջին տարիներս ստեղծվե-
ցաւ ուրիշ ընկերութիւն մը Անկախները (Les
Indépendants) տիպաւորով: Այստեղ jury-ի դրու-
թիւնը չը կայ, բաւական է առաջընել անդա-
մակցել: Գուցահանդէսներուն կարեւոր մաս-
նակցելու համար: Ասոնց բացումներուն ոչ
հանրագիտութեան նախագահը եւ ոչ ալ նոյն
իսկ պարզ նախարար մը ներկայ կը գտնվի:

Արդ, մէկ զի ձգելով Անկախները, որոնք ոչ
իրրեւ պաշտօնական, ոչ ալ նոյն իսկ կէս-պաշ-
տօնական արուեստագէտներ իրաւունք ձեռք
չեն բերած իրենցմով զբաղվելու, մնացեալ եր-
կու նշանաւոր ընկերութիւնները իրենց տա-
րեկան ցուցահանդէսները կը կազմակերպէին
զատ զատ տեղերու մէջ: Այս տարի, առանց
իրարու խառնվելու, իրենց արուեստագէտներ
տեղի ունեցաւ 1900-ի տիեզերական ցուցա-
հանդէսէն մնացած գեղարուեստներու Մեծ
Պալատին մէջ: Գեղարուեստի ամեն ճիւղերու,
ինչպէս նկարչութիւն, քանդակագործութիւն,
ճարտարապետութիւն, փորագրութիւն եւ այլն,
անթիւ, անհամար արտադրութիւններէն միայն
հայ արուեստագէտներու գործերը պիտի զբաղ-
նեն մեզ:

Այս տարի երկու ընկերութեան ցուցահան-
դէսին մասնակցող հայ նկարիչներու թիւը կը
հասնի եօթի:

Դ Ե Պ Ի Ս Ա Լ Մ Ա Ս Տ

Վերջին ժամանակները հայոց պարբերական
մամուլի էջերում լաճախ երեւան են գալիս
յօդուածներ, որոնք մեր կարիէրիստ եւ բուր-
ժուազական հովիտով վարակված ինտելիգենտ-
ներին խորհուրդ են տալիս ձեռք վերցնել
կենտրոնական քաղաքները, ըստ երեւոյթին,
հրապուրիչ, բայց իսկապէս անբովանդակ եւ
ապարդիւն կեանքից եւ դնալ հեռաւոր գա-
ւառներին խուլ անկիւնները—տգէտ եւ ամեն-
քից սոսաղված հայ գիւղերը, որտեղ մեծ կա-
րիք է զգացվում ինտելիգենտ ոյժերի, թարմ,
կենսունակ, առողջ տարրի...

Տասնեակ տարիներ առաջ մի եւ նոյն կողմ
անում էր նաեւ ռուս առաջնորդ մամուլը իր
ինտելիգենտ ոյժերին, հրապուրելով նրանց
գաւառական կեանքի իշխական գործունէու-
թեամբ:

Որքան մեզ յայտնի է, ռուսաց լաւագոյն
գործիչների այդ սրբազան կողմ «ճայն բար-
բառոյ յանապատի» չը մնաց,—ինչպէս մեզա-
նում—այլ ընդհակառակը գտնվեց երկու սեռի՝
գործելու տենչով համակված ինտելիգենտների
մի ստուար բազմութիւն, որ արհամարհելով
կենտրոնների փարթում եւ դրաւիչ կեանքը մի
կողմից, գաւառներում գործելու ահագին զը-
ժուարթութիւններն ու զրկանքները միւս կող-
մից, հաստատուն քայլերով զիմեց գաւառները՝
գիւղական ուսուցչի, ուսուցչուհու, մանկա-
բարձուհու, գրագրի, դեղագործի եւ այլն, եւ
այլն պաշտօններով...

Մեր նպատակը չէ, ի հարկէ, նորից արտա-
գրել այն բազմութիւն կոչներն ու յօդուածները,
որոնք տարիներ ընթացքում այնքան առա-
տուխեամբ տպագրվել են հայ լրագրիչների եւ
ամսագիրների մէջ:

Մի կէտ միայն չէ կարելի ուրանալ, որ այդ
ինտելիքը այժմ օրվայ այդուր ինտելիքներից կա-
րեւորագոյնն է եւ դրա յետագիւր մահացու
յանցանք կը լինի: Սակայն կարելի համարե-
լով ինտելիգենտ մարդուց պահանջել, որ նա
գնայ գաւառը, պէտք է ուղղակի անկարելի
համարենք այն, որ գաւառ դնացող, գտնէ
չառ համեմատ չափով, ապրուստի միջոցները ի
նկատի չունենայ. չէ որ մէկ եզրից երկու
կալի չեն քերթում... Եւ որովհետեւ յայտնի
է, որ գաւառները սեփական ոյժերով անկա-
րող են գործելու ասպարէզ տալ—թէկուղ
զպրոցներ բանալով—մանաւանդ Սալմաստը,

Գեղարուեստներու ազգային ընկերութեան
բաժնին մէջ ցուցադրած են պ.պ. Էդգար Շա-
հին, Զաքարեան, Ֆրանսայի Արուեստագէտ-
ներու ընկերութեան բաժնին մէջ՝ պ.պ. Տի-
րանեան, Շապահեան, Թէրլէմէյեան, Գեոր-
գեան եւ Գրիգորեան:

Վերջին երեքը նորեկներ են: Պ.պ. Շահին,
Զաքարեան, Տիրանեան եւ Շապահեան չա-
տոնց է արդէն իրենց ազատ մուտքը ունեն
Ֆրանսայի տարեկան արուեստահանդէսներուն
մէջ:

II

Պ. Տիրանեան Պ. Սարգիս Տիրանեան իր
արուեստագիտական ուսումը Պոլիս ակադե-
միային անվան է այստեղ՝ Պարիզի գեղարուես-
տից Ազգային վարժարանին մէջ: Եօթը տար-
վան ուսումնասիրութիւնէն յետոյ՝ Իտալիա եւ
Յունաստան ճամբորդութիւն մը կատարած ու
ու վերադարձած է Պոլիս 1887-ին դարձեալ
Պարիզ եկած է ու երրորդ անգամը ըլլալով՝
մասնակցած է գեղարուեստի տարեկան ցու-
ցահանդէսներուն 1889-ին՝ գեղարուեստից
անօրէն պ. Գիւսթաւ Լաուռմէի կնոյ կենդա-
նագիրը ցուցադրելով: Պարիզի մամուլին կող-
մէ լաւ ընդունելութիւն գտած է ու այդ վայր-
կեանէն որչաժ է հաստատվել Պարիզի Այնու-
հետեւ մասնակցած է տարեկան նկարչահա-
դէսներուն: Ֆրանսական կառավարութիւնը
իրմէ 5 նկար գնած է այլ եւ այլ թուական-
ներու ու զանազ դրկած գաւառական թան-
գարանները:

Պ. Տիրանեան orientaliste մըն է: Այս տարի

որի մասին է լինելու մեր խօսքը, ուստի անհրաժեշտ է դրսի ներթափանցող Ժամանակաւոր օժանդակութիւնը:

Ով որ քիչ-քիչ հետեւել է մեր լրագրութեան, անշուշտ նրան յայտնի կը լինի, որ Պարսկաստանի մի անկիւնում կայ Սալմաստ անունով մի հայաբնակ գաւառ, որտեղ իր ուղորակելի գոյութիւնը աղոյցելով քարշ է տալիս մի մարտիրոս ժողովուրդ... Այդ ժողովուրդը տղէտ է, ողորմելի, անտեսական ծանր ճգնաժամի տակ ընկճված եւ, որ չլրացուի է, միանգամայն մոռացված, երեսի վրա ձգված... նոյն իսկ իր հարազատ գաւառներէն Մենք զիմում ենք այն բոլոր զգայուն սիրտ ունեցողներին, մասնաւոր Ռուսաստանի զանազան քաղաքներում բաւական նշանաւոր դիրք ստեղծած մեծաքանակ սալմաստեցիներին, եւ առաջարկում կազմել մի դրամական ֆոնդ, որի նպատակը լինէր ներթափանց օժանդակութիւն մատակարարել Սալմաստի դպրոցական գործին, այն Սալմաստի՝ որտեղ դպրոցի գոյութիւնը պայմանաւորված է պատահական ուսուցչի գոյութեան հետ եւ որտեղ ներկայումս եղող մի զոյգ ողորմելի դպրոցները *) սատարի իրենց են Տէր-Թորոկեան դպրոցներն իրենց «Խալիֆա-Թաթմաշներով» եւ «Արմէն-Պատուելիներով»...

Աւելի քան տասը հազար հայ ժողովուրդ ունեցող Սալմաստը այսօր խաղաղութեան է խորին ագիտութեան թանձր խաւարում, եւ այն էլ մի այնպիսի ժամանակ—այդ բանը մենք չենք տեսնու—երբ Պարսից ներկայ բարեխնամ կառավարութիւնը իր ուսումնասէր վեհապետով մի կողմից, ուստաց արծաթի Ասորպատականում ունեցած ահագին ազդեցութիւնը միւս կողմից—նովաստորում են կուրտաւան ամեն մի գործ, նախնաւոր կըրթական—ուսումնարանական գործը...

Աւելացնենք դրանց վրա եւ այն, որ Ասորպատականի նորընտիր առաջնորդ Նիլիէ վարդ. Մուրադեանի անցեալ յաջորդական գործունեութիւնը մի կարեւոր դրամական է, որ եւ յուսալ է տալիս, թէ այսուհետեւ Սալմաստում կըթափանչուի արթնանալու տեղին է դրաւելու:

Ուղղակի օժանդակութիւն է մի այսպիսի նպատակաւոր ժամանակ ձեռքներս ծալած, մեծակային ցուրտ անտարբերութեամբ դիտել, թէ ինչպէս աշխարհիս երեսին բարոյապէս մասնանուծ է կուրտաւոր տարածելու ընդունակ մի բոլոր ժողովուրդ:

Էլ ինչպե՞ս են մեր «դիպլոմատները», էլ քր օրվայ համար է ճշտելու տոգրակի պաշտօն կատարող հայ ունեւորը...

Բայց մենք մեր խօսքն ուղղում ենք ամենինք շատ այն ունեւոր, միւսնայն ժամանակ անարար սիրտ ունեցող հայ օրորդներին եւ *

*) Տարբերակ էր նորերում Սալմաստից դրած «Մշակ» մի թղթակցութեան տակ ստորագրած տեսնել «Տեսուչ ազգային վարժարանի» մեծարժեք տոգրով, որով շատ խղճալի տպագրութիւն են թողնում Սալմաստը եւ նրա «ազգային վարժարանները» իրանց տեսուչներով շատ մօտիկաց ճանաչող մարդկանց վրա...

Գոհարարած նկարը կը ներկայացնէ Թրքական Բաղնիքը մը: Պ. Տրքականը՝ որուն տաղանդը չէ որ կը պակսի, Արեւելքը մոռցած ըլլալու է: Իր Թրքական Բաղնիքին մէջ քայքային նօթը քիչ մը չափազանցված կը թուի ինծի:

Պ. Շապահեան: Ինծի ըսին թէ պ. Արեւէն Շապահեան ինքնօգնութեամբ առաջ եկած նկարիչն էր: Եւ ժամանակ մը նոյն իսկ Այվազովսկիի մօտ գտնված է, բայց ոչ իբրեւ աշակերտ: Կերեւի թէ այդ պատճառով է, որ ինք ալ ծովանկարներ կը շինէ, ինք ալ միւս միայն ծովանկարիչ է: Բարի կամեցողութիւն շատ ունի, բայց եթէ խանդավառութիւնը, ասորեանքին կրակը իրեն կը պակսի, յանցանքը իրը չէ ապահովաբար: Մեծ պալատին մէջ այս անգամ ցուցադրած նկարը անցեալ տարի միջազգային ցուցահանդէսի զեղարուեստական բաժնին մէջ ի ցոյց դրված էր արդէն: Դժնան նաւահանգիստն է գիւրջական պահուն նկարված: Կէս ամպամած երկինքի մը մէջ զեփ գեղին լուսինը կը իր հիւսիսային լոյսը կը թափէ ջուրերուն վրա: Այլքները հեռունեղէն ունեւոր կուգան արեւմտեան աւազը ժանկաւորել իրենց ձերմակ փրփուրներով:

Լուսինին խաղերը (effet) բաւական աշուղ են, բայց ջուրը պէտք եղածին չափ կենդանի, չարժանի չը թուեցաւ ինծի:

Պ. Թէրլէ մէջնեան: Պ. Փանոս Թէրլէ մէջնեան արուեստագէտի լաւ խառնվածք մը ունի: Եթէ չեմ սխալի երկու տարի առաջ Կովկասէն եկաւ Պարիզ Academie Jullian-ի մէջ գնահատելի յաջողութեամբ մը հետեւեցաւ իր

տրիկներին, որոնք եթէ իրանց միանգամայն աւելորդ արդուարդի համար ամառվայ սէզոնում ծախսած գումարի մի շատ աննշան մասը բաժին հանեն, կարող են դրանով Սալմաստում մի-մի ուսումնարան ապահովել...

Գոնէ օրինակ վերցրէք հետաւոր Ամերիկայի գործարարներուն տաժանելի աշխատանքով ապրող հայ-բանորներէն, որոնք իրանց լեղիարցունքով ձեռք բերած կօպէկներէն յիսուն հազար դոլար են բաժին հանել մայր-հօրենիքում կըթուլեան գործը առաջ տանելու համար... օրինակ վերցրէք այդ կոշտացած, բայց զգայուն վատակաւորներէն:

Օգնեցէք... Դրանով դուք ձեր կենդանութեան ժամանակ կանգնեցրած կը լինէք բարոյական մի վեհարձան, որը ձեզ վեր կը բարձրացնէ այն տիրւիք, որի թանձրութիւնը վերջ ի վերջոյ ձեզ խեղդամահ է անելու:

Սար. Օհանջանեան

ՆԱՄԱԿ ԲԱՐՈՒԻԹ

Օգոստոսի 7-ին

Դրամական ճգնաժամը Բաղնիքում գնալով աւելի սուր կերպարանք է ստանում եւ զգալի դառնում ոչ միայն փոքր եւ միջակ վաճառականներին համար, այլ նոյն իսկ մեծերից շատ շատերին համար, որոնք այսօր միլիոնատէրի անունն են կրում: Ուրիշ տեղերում միայն մեծ կարծիք են ունեցել բազմաթիւների մասին, սակայն եթէ մօտիկ ծանօթ լինէք նրանց գործերին, այդ կարծիքը կրիտիկայի չի դիմանայ:

Բազուի հարուստները միշտ կանխիկ դրամի նեղութիւն կրել են, բայց այդ նեղութիւնից ազատել են նրանք բանկերը, որոնց դռները միշտ բաց են եղել մեր արդիւնագործներին առաջ: Շատ անգամ մեր բանկերը անգլիէ գումարներ են բաց թողել նոյն իսկ չունեւորներին, որոնք չնորհիւ այդ հանգամանքի կարողացել են իրանց համար կարողութիւն զիջել: Սակայն վերջին երկու տարվայ ընթացքում տեղի ունեցած մի քանի անակոթութիւնները բանկերի աչքը բացեցին եւ այժմ նրանք վերին ստորեւանի զգուշութեամբ են վերաբերվում մուրհակներին զեղջման գործին: Այն մուրհակները, որոնք մի ժամանակ բանկերի կտուրվարներն առանց կօմիտէտի թոյլտուութեան, ուրարութեամբ զեղջմում էին, այսօր մերժվում են բանկերի կողմից: Իսկ մասնաւոր դիսկօնտը մի տարօրինակ կերպարանք է ստացել: Այլ եւս չեն ասում թէ կընդունեն զեղջմու 15—2000, ոչ, այլ ուղղակի լայն ինչ գումարը եթէ կը տաս, կը զեղջմու, եթէ չէ, քարով եկար, գուռը բաց է: Դիւցուք մէկին հարկաւոր է զեղջմ մուրհակ 1000 ր. 6 ամիս ժամանակի,—պահանջում են ձեռքից 150—200 ր. իսկ թէ քանի տոկոս է կազմում այդ, խօսել անգամ թոյլ չէ տրվում:

Դրամական այդ սուղ դրութիւնը բնականապէս պարզ է թէ ինչ զգուշութիւնները պատճառ կարող է դառնալ, եթէ մի որ եւ է

նկարչական ուսումնասիրութիւններուն ու երբ արդէն ինքզինքը ցոյց պիտի տար այստեղ, ստիպելուս վերադառնալ Կովկաս: Ես իր ապագային վրա ունիմ մեծ յոյս, եթէ չարունակէ ամեն բանէ առաջ մտիկ ընել բնութեան մեծ ձայնը:

Պ. Թէրլէ մէջնեան անցեալ տարի ամառը Պրեթանիս գացած էր étudé-ներ ընկնու Այնտղէն բերան քանի մը ուսումնասիրութիւններ: Ցուցահանդէսէն ընդունված նկարը այդ étudé-ներէն մէկն է պարզապէս:

Դիւղական աղբիւր մըն է, որուն տանիքին վրա ծերուկ կին մը նստած է: Իր քովը կը հանգչի ձեռքով գլուխը սոյլով մը: Զինչ երկինքը մը տակ գիւղին տունները կը բարձրանան շատ նախնական ճաշակով մը: Ամառվան շրջանող արեւ մը այս ամենը կը լուսայ լոյսի թափանցիկ ու լայն ալիքով մը:

Պ. Գրիգորեան: Պ. Յովհաննէս Գրիգորեան բաւական ժամանակ է ի վեր հաստատված է Պարիզ: Գրիգորեանից ազգային վարժարանի ընթացքն աւարտելէ յետոյ՝ քաջութիւն ունեցած է առանց որ եւ է օտար օժանդակութեան շարունակել իր աշխատութիւնները իր ճակտին քրտինքով: Կենքի զօտարութիւնները զինքը հարկաւորած են դուռ արուեստի երազները մէկդի թողնել ու ձեռնունքով եւ որմերու զարդանկարչութեամբ (décoration) զբաղիլ:

Այս տարվան զեղարուեստներու ցուցահանդէսին ուղարկած կտավը Լուվրի թանգարանին արահանդէս մէկուն՝ galerie d'Apollon-ի

օգնութիւն չը լինի ուրիշ կողմից: Բանը այն է, որ բոլոր արդիւնագործները, մեծ թէ փոքր, իրար հետ կապկապված են «բարեկամական մուրհակներով»: Եթէ այսօր մէկը իր վճարները դադարեցնէ, նա իր հետ քարշ կը տայ եւ մի քանի իր նմաններին, որոնց հետ մուրհակները օպերացիա է ունեցել, այդ մի քանիսն էլ մի քանի ուրիշներին եւ այդպիսով զօրաղղութիւնը աւելի ահեղի կերպարանք կը ստանայ:

Շատերն էլ, յոյս գնելով բանկերի վրա, իրանց գործերը ոյժերից վեր են սկսել եւ այսօր վճարները առաջը դիմանալ անկարող են: Նաւթային արդիւնքների գները այն աստիճան վայր են ընկել, որ հողերի արդիւնագործութիւնը արդէն վնասակար է դարձել արդիւնագործի համար: Նաւթի պուզը այժմ առնուազն նստում է արդիւնագործին 8—9 կօպ, իսկ նա ստիպված է ծախել 6 1/2—6 3/4 կօպէկով:

Ժամանակաւոր օգնութիւն կարելի էր հասցնել, եթէ հնարաւորութիւն լինէր մի առ ժամանակ յետաձգել վճարները 6—9 ամիսով: Այդ հարցը արդէն Պետերբուրգում հրատարակվող «Новостям» լրագրի մէջ յարուցված է, սակայն հազիւ թէ աջողութիւն գտնի: Եթէ աջողի էլ, ես կարծում եմ, կարող է մի-միայն այնպիսի ձեռնարկութիւնների վերաբերմամբ, որոնք ունեն անցեալ եւ լաւ ապագայ են խոստանում: Բայց ինչ վերաբերում է փոքրներին, օրանց ժամերը հաշւած կարելի է համարել:

Իրօք, շատ ծանր եւ դժուար ժամանակ է: Օգնութիւնը անմիջապէս հարկաւոր է:

Ֆ. Մարդանեան

ՆԱՄԱԿ ԽՐԱԳՐՈՒԹԵԱՆ

Մօսկվա, օգոստոսի 2-ին

«Вестник Европы» ամսագրի 5, 6, 7 եւ 8 համարներում տպվեց Նիլ. Մարկովի «Рассказ Арменія» վերնագրով յօդուածը, որը աւելի հեղափոխի է անուանել ճանապարհորդի թրուտիցի տպագրութիւններ:

Ճանապարհորդելով Երեւանի եւ Կարսի նահանգներում՝ նա միջոց է ունեցել այցելելու էջմիածինը, Անիի աւերակները եւ նշանաւոր վանքերը:

Թէ ինչ ողորմելի դրութեան մէջ են զրանվում այդ վանքերը, մենք մտածում գիտենք պատահական թղթակցութիւններից, որոնք երեւում են մեր պարբերական հրատարակութիւնների մէջ: Թողնելով անտեսական մասը, մեր վանահայրերը մինչեւ անգամ չեն աշխատում ուսումնասիրել վանքերի հնութիւնները, կազմել նրանց պատմութիւնը, հաւաքել չըջաւայ արձանաքարերը, որոնք մեծ նշանակութիւն ունեն հնագիտութեան եւ պատմութեան համար:

Բայց կայ այդ վանքերում եւ մի բան, որը անշուշտ պէտք է ուսումնասիրել ամենաբարեխիղճ կերպով եւ որը վանահայրերի գործը չէ,—դա հայկական ճարտարապետութիւնն է, որը մինչեւ այժմ լրջօրէն չէ ուսումնասիրված:

Այժմ ճանաչվում է ճարտարապետութիւն հայ-գրադական: Թէ դա որքան իրաւացի է կոչված, այդ ցոյց կը տայ հին հայ եւ վրաց վանքերի ուսումնասիրութիւնը: Յետաձգել վերադարձնել է:

Պ. Գրիգորեանի նկարը արդէն ծախված է: Պ. Գրեգորեան: Պ. Գրեգորեան Ամերիկայի Ֆիլադելֆիա քաղաքին մէջ նկարչական իր առաջին փորձերը ընելէ յետոյ Պարիզ՝ Ժիւլիանի եւ Դըլաքրիզի Ակադեմիաներուն մէջ հետապնդեցաւ իր նախասիրած ուսումնի:

Պ. Գրեգորեան եւս անկեղծ մըն է: Իր նկարը կենդանագրի ուսումնասիրութիւն մըն է: Լայն ու ցաւազին դէմքով իտալացի պառաւկին մըն է, որ խոշոր գէրք մը բռնած ունի իր ձեռքին մէջ:

Պ. Գրեգորեանի պատկերը շատ խղճալի ու շատ յաջողված աշխատութիւն մըն է:

Գրիգորեանից ազգային ընկերութեան բաժնին մէջ ցուցադրած են պ.պ. Շահեն եւ Զաքարեան:

Պ. Զաքարեան: Պ. Զաքարեան nature morte-ի միայն կաշխատի: Շատ գնահատված արուեստագէտներէն մէկն է: Hors concours է ինքը: Իր անունը ծանօթ է զեղարուեստական շրջանակներուն, բայց չը գիտեմ թէ քանի հողի գիտէ արդեօք իր հայ ըլլալը: Գրեթէ ամեն տարի իր գործը յիշատակող զեղարուեստի ընդառնութիւնները կը ներկայացնեն ամեն ազգէ... բացի հայէ: Պ. Զաքարեան յոգնութիւն յանձն չէ ուզած առնել, գէթ անգամ մը օխալը ճշդելու: Կը վախճայ արդեօք որ մի գուցէ հայ անունը իր տաղանդը պղծելիցնելու ծառայէ: Ինչ զօրաղղութիւն որ ֆրանսացի, անգլիացի կամ գերմանացի ծնած չէ, այն ա-

յայտի մի գործ անկարելի է, ով է իմանում, քանի վանքեր են կուլ գնացել ժամանակի բռնութեամբ, որքան է փչացել Անիի աւերակներէն: Թող մեր ընկերները, որոնք կազմում են բաւական խոշոր թիւ ուսաց մասնագիտական բարձրագոյն դպրոցներում, ձեռնարկեն այդ գործին:

Անհրաժեշտ է կազմել խմբակներ, որոնց մէջ կը մտնեն թէ համալսարանական, թէ մասնագիտական դպրոցների ուսանողներ եւ թէ զեղարուեստ ուսումնասիրող ուսանողներ: Այսպէս ժամանակը այդպիսի խմբակներ կապելին մեր հայրենիքի զանազան անկիւնները եւ համարաշխ դործունէութեամբ բազմակողմանի կերպով կը ծանօթանան եւ մասամբ կը ուսումնասիրեն մեր հայրենիքը: Թէ այսպիսի ճանապարհորդութիւնները որքան օգտաւէտ կը լինեն մեր ապագայի համար, դա ահաւայտ է:

Առ այժմ ուսումնական տարվայ ընթացքում անհրաժեշտ է ընդհանուր ոյժերով կազմել ուրոշ ծրագիր: Եթէ մեր այս առաջարկը հաւանութիւն կը գտնէ միւս քաղաքների ուսանողների մէջ, թող բարեհաճեն դիմել Մօսկվա մեր հասցեով,—Императорское Техническое училище.

Ուսանող՝ Ա. Շահ-Նազար

ՆԱՄԱԿ ԽՐԱԳՐՈՒԹԵԱՆ

Բաթում, օգոստոսի 3-ին

«Մշակ»-ի մէկ քանի համարներում լայն տեսան յայտարարութիւններ մի եւ նոյն բովանդակութեամբ, որ իբր թէ եւ ուսուցչութեան պաշտօն եւ որոնում Թարգիզի կամ Թէհրանի հայոց ուսումնարաններում:

Հարկ եմ համարում դիմել յարգելի խմբագրութեանը եւ խոնարհաբար խնդրել, որ հաճէիք հրատարակել, որ այդ անձնաւորութիւնը եւ չեմ:

Հմայեակ Գահրիմանեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակ» № 147-ի առաջնորդողի մէջ մեր յայտնած միտքը՝ Թիֆլիսի նոր առաջնորդի մասին՝ ճշդվում է: Երեսուից մեզ հաղորդում են, որ մտադրութիւն կայ Թիֆլիս ուղարկել Սուքիաս արքեպիսկոպոս Պարգեանցին: Իսկ Թիֆլիսում ասում են, թէ իբրեւ երկրորդ կանդիդատ՝ էջմիածնում նկատու ունեն եւ Գարեգին եպիսկոպոս Սաթուկեանցին:

«Новое Обозрение» լրագրին հաղորդում են, թէ հաղորդակցութեան ճանապարհների մի-միտարի դիւստտան փոխ-դիրեկտոր Ն. Տերտկի, միմիայնութեան յանձնարարութեամբ, ուղարկվում է Կովկաս նաւթի տեղափոխութեան պայմաններին հետ մանրամասնաբար ծանօթանալու համար:

«Новости Дня» լրագրին հաղորդում է, թէ ներքին գործերի միմիտարի կարգադրութեամբ «Неделя» շաբաթաթերթի հրատարակութիւնը դադարեցրած է:

Բարձրագոյն հաստատված կարգադրութեամբ Կովկասի կուրանտին բոլոր հաստատութիւնները, ֆինանսների միմիտարութեան իրաւա-

տներ թերեւս հպարտութեամբ պիտի պահանջեն իր ազգայնութեան իրաւունքը: Անտարակոյս մենք «Մշակին» մէջ թիւ ազգասէր ներ չենք, ու երբեք ազգասէր չենք, եթէ ազգախորթութիւն ընելով պէտք է հասկնալ տըն մար ու անիրաւ ստեղծութիւն մը այն բոլոր աններուն դէմ, որ մեզի օտար են: Միայն թէ այս պարագային մէջ կուղէինք ցոյց տալ թէ որուն ստոր բան է խոյս տալ տեղուց մը որուն մարդ կապված է կամայ աւտոմայ, որ գեղեցիկ ու խորիմ չի հնչեր, որ մարդկութեան զօրաղղ ու խոնարհ մտքի մը գոյութիւնը կօրուչէ: Պ. Զաքարեան նոյն իսկ ամեն կողմից է իր կենդանի հետ, կըսեն: Պահանգիստ թողունք զինք. պարտին հանդարտ մարտողութիւնը չը խանդաբենք: Եթէ պատահմամբ իր աչքին տակ իրան այս տողերը թերեւս հայ թերթի մը կարծիքը արհաւարէ՛ն, ձայն թերթը իրեն յաճախորդներ կրնայ ստեղծել, իր գրպանը քանի մը սուկի աւելի կրնայ գլորեցնել: Ո՛հ: Ան ասում:

Պ. Շահեն: Պ. Էդգար Շահեն՝ պ. Զաքարեանի բոլորովին հակառակ է: Ամեն տեղ ի ծագումն իրաւունքը պահանջած է բարձրագոյն իրան պէտք է անկեղծօրէն չնորակալ ըլլալն ոչ միայն իր քաղաքացիական արեւմտեան ալ է իր ցեղը շատ անգամներ անծանօթ ներու առջեւ մեծցուցած, սերցուցած ըլլալուն համար: Մասնաւոր որ ինքը մեծ արուեստագէտ մըն ալ է: Իր տաղանդը կազմված է ասոր ընդ բարութեամբ, գութով: Իր գործերը անգլիացի կամ գերմանացի ծնած չէ, այն ա-

ստեղծելից զուրա գալով՝ մտնում են ներքին գործերի միջնաբերդին՝ իրաւաստիւթեան տակ՝ կողմաստեան երկրում կարանտինային պարաւորութիւնները կատարելու համար հիմնական են բժշկական գիտողութեան 7 ցածրագիտական կետեր, որոնցից 4-ը առաջնակարգ, իսկ 3-ը՝ երկրորդական, եւ 8 ծովային կարանտինային, որոնցից երկուսը կենտրոնական, կարանտինային հաստատութիւնների ընդհանուր հսկողութիւնը յանձնվում է կողմաստեան կառավարչապետին:

Նիթեգործեան տեսնալաւոր գործերը, որոնք սկզբում շատ դանդաղ էին առաջ գնում, մայրաքաղաքի լրագրողների ասելով, այժմ փոքր ինչ կենդանութիւն են ստացել: Գնողներ կան թէ կողմաստեան եւ թէ Սիբիրից: Մանուֆակտուրային եւ երկաթի ապրանքների արդէն մի քանի խոշոր վաճառուներ են կատարված:

Որովհետեւ անթիւ հեռագրի փորձերը աշող զուրա եկան, ուստի կառավարութիւնը մտադրութիւն ունի, ինչպէս հաղորդում են լրագրողները, անթիւ հեռագրի փորձածութիւնը մտցնել Սեւ ծովեան նաւերի մեծ մասի մէջ:

Անգլիական ծովային խոշոր առեւտրականների ձեռնբեցութեամբ եւ նրանց միջոցներով կազմակերպվում է չորհանաւային անմիջական հաղորդակցութիւն Պետերբուրգի եւ Լոնդոնի մէջ: Նոր կազմվող ընկերութեան չորհանաւերը պէտք է մի ժամանակ գնան ոչ պակաս, քան 18 ծովային հանգույց, այնպէս որ չորհանաւը Պետերբուրգից Լոնդոն կը հասնի երրորդ օրը: Շողանաւերը զուրա կը գան Լոնդոնից եւ Պետերբուրգից ամիսը երկու անգամ:

«НОВОЕ ВРЕМЯ»-ին Մոսկվայից հեռագրում են, որ Մոսկվայի Փոքր թատրոնում առաջիկայ տեղում նորութիւններից մէկը լինելու է Վ. Վերիլիայի «Բազուրի ֆոնտան» պիեսը: Ընթերցողները երեւի իսկույն կը գուշակեն, որ այդ «ֆոնտանը» ցեխի «ֆոնտան» է լինելու:

Անգլիական ծովային խոշոր առեւտրականները 6-ին, ցերեկվայ ժամը 10-ին, հոգեւոր կառավարութեան հրահրած անգլիական ծովային խոշոր առեւտրականների ընդհանուր ժողովը՝ ա. Փրիլիչ եկեղեցու համար նոր երէցփոխ ընտրելու: Մոսկվայի նշանակված օրը լի օր լինելով, ծիսակատարները չը հաւաքվեցան եւ ժողովը չը կայացաւ: Ինչպէս յայտնի է, սրանով չորրորդ անգամն է, որ այդ հարցը համար ժողով է լինում, բայց չորրդն էլ ապարդիւն են անցնում: Ժողովուրդը, նախկին երէցփոխական խոշորութիւններից միտքը կտրված եւ յուսահատված, այլ եւս ոչ ոքի վրա յոյս չէ դնում, ուստի շատ ծանր եւ անապահով է վերաբերվում նոր երէցփոխի ընտրութեան:

ՂՈՒԲԱՅԻՑ մեզ գրում են. «Թէքէյ, Ալիք եւ Դիզա՝ գիւղերում յուլիսի 27-ին ձուրի մե-

նքը երգին եղած է ինկաւորներուն, անժառանգներուն: Արուեստագետի մը համար տաղանդ ունենալը չի բաւեր: Պէտք է զայն աղբիւր մը ընել մարդկային վեհանք, բարձր գիտելութեամբ: Պէտք է անով ստեղծել խորհուրդ, գործելու, սիրելու առիթներ: Պէտք է զայն լծակը ընել արդարութեան ու իրաւունքին, ու խթանը՝ հսկայական, վսեմ պայծառութեամբ: Պ. Շահինի տաղանդը այս բոլոր առաքելութիւնները ունի իր մէջ:

Տակաւին հազիւ քսան եւ չորս տարեկան է ու համաբաւին դնելը բացված են արդէն իր առջեւ: Արուեստի էն մեծ վարպետները մէկէ աւելի անգամ իրեն բերած են իրենց եղբայրական համակրանքը ու իր երիտասարդ ճակատին համար հիւսած են փառքի պսակ մը՝ որ ապանով եմ, հեռագրեմ պիտի բողբոջի, ծաղկի ու շքեղանայ:

Իսկ հիւսացումս թերեւս քիչ մը չափազանց միամիտ կերպով արտայայտեցի: Անոր համար որ անիկա անկեղծ է: Անոր համար որ Շահինի գործերը մէջս արթնցուցած են ինչ որ մարդ ունի ամենէն աւելի անգիմարդելի ու թանկագին—յուզվելու, տառապելու կարողութիւնը:

Եթէ միջոցս սահմանափակ չլըլար, քանի մը հատուած հաճոյքով պիտի յիշատակէի այստեղ այն զորուստական էջերէն, զոր Ֆրանսայի էն կարող զննադատները՝ Ռոսէ Մարքս, Լէոն Աւիլիտ եւ այլն նուիրեցին իրեն: Ինքը ոչ միայն Ֆրանսայի այլ եւ Անգլիոյ մէջ ալ անպայման խանդավառութեան առարկայ եղաւ:

Շուրթեանը կարկուտ է եկել եւ վնասել է բուսականութիւնը: Կարկուտը չէ՛ հալվել ամբողջ երկու օր, շահել ծառերը կտրատվել են, ուրիշ գիւղերումն էլ եկել է կարկուտ, բայց անվնաս:

ՎԵՐԻՆ ԶԱՐԱՆԼՈՒՂ գիւղից (Նոր-Բայազէ-գիւղ գաւառ) մեզ գրում են. «Յուլիսի 30-ին, կէս գիշերին, երեք թուրք, Շորթու-Թագա-քենդ գիւղի բնակիչներից (Բաշորաչէնի գաւառ) Շամիլ Գերբաշի Թալիֆ օզլի, Ալակաբ Ֆարաքի օզլի եւ Ալի հաջի Մամո օզլի փորձ արին Վերին Աղիաման գիւղի ամբողջ նախիրը քշել եւ տանել, բայց գիշերապահ ջուրջ Մամո օզլին ձայն տուեց գողերին, որ չը մօտենան, գողերը տեսնում են որ գիշերապահը մէկ մարդ է, պատահում են Մամո օզլուն որ իրանցից հեռանայ, որպէս զի տանեն հայի ապրանքը: Բայց տիրաւէր ջուրջ Մամոն ուշադրութիւն չէ դարձնում գողերի այդ խօսքերի վրա եւ փորձում է դիմադրել ձեռքի փայտով, այն ժամանակ Շամիլ Գերբաշիի Թալիֆ օզլին տարձանակ է արձակում Մամոյի կրծքին, յետոյ երեք անգամն էլ զոդանալով թողնում են փախչում: Ատրձանակի ձայնին վրա են հասնում այլ սեռակայ հողիւնները: Վերաւորված Մամոն պատմում է, թէ ով իրան վիրաւորեց եւ կէս ժամից յետոյ չուսչը փչում է: Աւաւ-ւտեան եղբուրները յայտնում են պրիստային: Երեք չարագործներ իսկույն ձերբակալվեցին»:

ՆՈՒԽՈՒՑ մեզ գրում են. «Այս ամառ երեսնաների մէջ տարածված է փորութեան թրին, որին զոհ են գնացել բազմաթիւ մանուկներ: Այդ հիւսանքութեամբ վարակվում են եւ հասակավորները»:

ԱՆԷՔԱՆԴՐՈՒՄ մեզ գրում են. «Հըր-դեհից զուրկ չը մնաց նաեւ մեր խեղճ քաղաքը: անցեալ օր մօրի դարձաւ մի գիւղացու 28 սալ ցորեն: Կրակը մարել հնար չեղաւ, այլ զօրքը շնորհիւ կարելի եղաւ դրացի ցորենները ազատել»:

ՎԵՐԻՆ-ԶԱՐԱՆԼՈՒՂ գիւղից (Նոր-Բայազէ-տի գաւառ) մեզ գրում են. «Ահա 5-6 շաբաթ է, որ անառուների մէջ տարածվել է մի անբժշկելի ցաւ «Գաբադ» անունով: Այդ ցաւը գոյացել է, չառերի սակավ, գետնի վերաթիւնից եւ չորութիւնից: Ցաւը երկու տեսակ է, բերանի եւ ոտի: Մի քանիսները ոտից կաղում են, իսկ մի քանիսները բերանից կաթիլ-կաթիլ թուք է կաթում եւ ոչինչ չեն ուտում: Շատերը ծաւալում են եւ շատերը 10 օրից յետոյ առողջանում են եւ կրկին երկու օրից յետոյ առողջվալ պէս հիւսանալու: Գիւղացիները ոչինչ մի հնար չեն կարողանում գտնել այդ հիւսանքութեան դէմ: Շատ խնդրում ենք պալատիկներից, որ եթէ յայտնի է այդ ցաւի դեղը, ծանօթացնեն մեր խղճուկ հասարակութեանը»:

ՆՈՒԽՈՒՑ գրում են. «Յօրենն ու գարին

Թայմազէն սկսած մինչեւ գաւառական թերթերը իր տաղանդին մատուցին ամենէն փայլաւոր յարգանքը: Թոյլ տուէ՛ք յիշել միայն Թայմազի կարծիքը:

Ճեղքանալից մասնակցողներուն երկու էն կարեւորները Պարիզն են: Պ. Էլէն՝ որուն գերազանցողն է շնորհիւ արուեստը գուրու կը ցայտէ իր ութը պատկերներուն մէջ... եւ պիւիքառ Շահին՝ որուն պատկեր ուշադրաւ ուժ մը կաւելցնէ ցուցանանքներ: Իր խոնարհ կենսաբան տեսարաններու արտայայտութիւնները ուժով են սիրականորէն ստեղծուած են: Իր գործերուն լաւագոյնը թերեւս «Ուրբաթ օր ապուրի բաշխում» կոչուածն է, որ ամեն կերպով վարպետի գործ մըն է»:

Պէտք է աւելցնել թէ Թայմազէ՝ Էլէօր՝ որ Ֆրանսայի փորագրութեան անվիճելի վարպետն է եւ Շահինի վրա միայն խօսած է ամբողջ ցուցանանքի համար compte rendu-ին մէջ մանրամասնօրէն:

Այսպէս, պ. Շահինի կը սպասէ ամենէն լաւագոյն ապագանքն մէկը: Արժանիքին յարգանք մատուցանել պարտք մընէ: Կուզէի աւելցնել նաեւ թէ Անաթոլ Ֆրանս իր նոր պատրաստած գեղեցիկ եւ ուժով գործերէն մէկուն պատկերաւորութեամբ պ. Շահինի յանձնած է Գործը պիտի հրատարակվի մօտ օրերս շատ շքեղ կերպով ու սահմանափակ ծաւալով:

Պ. Շահին սկսած է նախ նկարչութեամբ, ու ցուցադրած է քանի մը անկեղծ կտաններ ինչպէս Մուրացիկը (Le gueux), գործ ա-

յատեղի եւ Ռուսաստանի բերքերի պակասութեան պատճառով թանգարան են: Յօրենի պուրը 70—80 կօպէկից բարձրացել է 1 ր. 20 կ., 1 ր. 30 կօպէկ, մինչեւ 1 ր. 40 կօպէկ, իսկ գարին 40—45 կօպէկից 70—80—90 կօպէկ»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Рыс. Вѣд.» լրագրին, գերմանական այլի կայսրուհի Վիկտորիայի թաղման առիթով, գրում են Բերլինից. «Զինուորական չուգով, որ համապատասխանում է նոր կուրսի ժամանակ ընդունված ճաշակին եւ համակրութիւններին, Պետադաւում այսօր թաղեցին կայսրուհի Վիկտորիային: Մեռածներին չեն հարցնում, թէ զուր զայիս է արդեօք նրանց իրանց թաղումը, եւ իսկապէս դա միայն թաղման կարգադրիչների ճաշակի գործն է, բայց այն մարդիկ, որոնք մօտ էին հանգուցեալ կայսրուհուն նրա կենդանութեան ժամանակ, մեղադրանքով չարժում են գլուխները եւ կրկնում. «Այդպէս չը պէտք էր վերջին պատերազմի նշանաւոր կնոջը: Բացի մերձաւոր ազգականներից եւ արքայական տան անդամներից՝ դաշագի ետեւից գնում էին զենեարաններ, պալատականներ, միլիտարներ: Ինտելիգենցիայի միակ ներկայացուցիչները, որոնց արքան համակրում էր հանգուցեալ կայսրուհին, միայն ընկալաւոր նախագահն էր Բերլինի օրեր-բուրգոմստրն էին: Եւ ապա մի ամբողջ ծով սուփներէ, կարմիր, սեւ, սպիտակ համազգեստներ հետեւակներին, հեծեակներին, թնգանթածիկներին... Կանայք եւ երեխաներ թաղմանը ներկայ չէին, բայց դա փոխանակ համաշխարհային ֆիլադալֆալ տաճարում էր դադարի առաջից կայսրական թաղը: Ահա թէ ինչպէս բռնաբարեցին այն նշանաւոր կնոջ յիշատակը, որ իր կենդանութեան ժամանակ թշնամի էր ամեն տեսակ ձեւականութեան, կոպիտ ոյժի արտայայտութեան եւ զինուորական ամեն տեսակ չուգի ու պատեր: Վիկտորիայ կայսր չուգեց փոխել մի քանի իր ճաշակն ու համակրութիւնները, նոյն իսկ ի յիշատակ իր նոր վաճառված մօրը»:

«Daily Mail»-ի թղթակիցը գրում է Կայսրադին, թէ այդ քաղաքում այժմ տրոսում են զարմուրդի անկարգութիւններ—սպանութիւններ, կողոպուտներ, որոնք կատարվում են օրը ցերեկով փողոցներում եւ հրապարակներում, ամենքի աչքի առաջ: Քաղաքի կենտրոնում տեղի են ունենում յարձակումներ բանկերի վրա: Ոստիկանութեան կազմը չափազանց անբաւարար է եւ ոչ մի գիմարութիւն չէ կարողանում ցոյց տալ կողոպուտների խնդիրներին: Քաղաքը կողոպուտում է ամենայնազուգն կերպով:

Մի անգլիական զինուոր, որ վերադարձել է հարաւային Աֆրիկայից, պատմում է հետեւեալ հետաքրքրական եղելութիւնը: Բրանդ-Փօթի մօտ գտնվող մի ամրոցում անգլիական պահակախմբի զինուորները չինել էին ժամանակաւոր բնակարաններում եւ խաղում էին «Պոլո»-ն: Կիւրքը: Նոյն իսկ հերթապահ զինուորը, որ պէտք է հակեր ամրոցի շրջակայքի վրա, թուղէր իր հրացանը եւ մասնակցում էր ներկայացմանը: Յանկարծ նորաչէն «Թատրոնի» դաները բաղկեցին եւ լալից հետեւեալ աղաղակը. «Այստեղ ես պէտք է խաղամ Նապոլէօնի դերը: Թող բողբոջեան իսկույն տան իրանց համաձայնութիւնը եւ բարձրացնեն ձեռները»... Աղաղակողը մի բօք էր, որ իր զօրախմբով չընպատեղի էր ամրոցին: Նա գերի վերցրեց

Լուրի ուրիշներ (Inferiens d'ouvrier) եւ տակաւին չորս ուրիշներ, ուր կը նշմարվեն մի եւ նոյն մտահոգութիւնները:

Յետոյ ինքը գինըր նուիրած է փորագրութեան արուեստին, որուն մէջ վարպետի անունը չանցեալ այնքան քիչ ժամանակի մէջ Պ. Շահին որքան տաղանդաւոր, նոյնքան առատ, գեղուն արուեստագէտ է: Իր փորագրութիւններուն թիւը 40-ը կանչնի:

Պ. Շահին իր աշխատութիւններէն երեքը միայն ցուցադրած է:

Առաջին կը ներկայացնէ կաղերու, կոյրերու, հայտնաւորներու, աղբաւորներու, ինկաներու լէգէն մը, մէկ խօսքով Պարիզի անկախ ու արտաձգիկ թշուառութիւնը՝ ափ առած՝ առուուն կանուխ մատուռի մը առջեւ, որ իրենց պիտի տայ իր աւելցուք: Որը նստած է, որը քաճակը ծռած անտեսանելի ահագին բեռի մը՝ դժբաղդութեան՝ ծանրութեան տակ: Ոմանք ոտքի վրա իրարու հետ խօսքի բռնված են: Անոնց մէջ երիտասարդներ կան, ծերեր կան, ու ինչպէս նաեւ կիներ՝ որ իրենց գաւակը իրենց թեւերուն մէջ՝ անօթութիւնը խաղաղող պատառ մը գարշիկի մտուցին կը սպասեն: Գլուխներու այս խառնամաղնում մէջ գիւմազութիւնները այնքան յստակ են, որ դիտողը առանց դժուարութեան անոնց վրա կրնայ կարգալ իւրաքանչիւրին հոգեբանութիւնը:

Երկրորդ պատկերը քաղաքին պարիսպներուն մօտ քրջահաւաքներու ընտանիք

անգլիական բոլոր զինուորներին, նրանց զենքերի, ծանրոցների եւ բեռական պարագաների հետ միասին:

«Allgemeine Zeitung» լրագրին, քաղելով իր տեղեկութիւնը պարլամենտական գործերին լաւ տեղեկալ չըլաններին, հաղորդում է, թէ մաքսային սակագներին վերաբերեալ օրինագիծը, որ այնպիսի մեծ աղմուկ հանց գերմանական եւ արտասահմանեան ոչ միայն քաղաքական, այլ եւ հասարակական չըլաններում, կը ներկայացնի ընկալաւոր ընտելութեանը, հենց որ նրա նստաշրջանը բացվի: Օրէնսդրական միւս բոլոր աշխատանքները առ ժամանակ կը դադարեցնվեն: Գերմանական կառավարութեան ուշքը ամբողջովին դարձած է այժմ այդ օրինագիծի վրա եւ նա պատրաստվում է ամեն տեսակ միջոցներ, ամեն հնարք գործ գնել, որպէս զի ընկալաւոր ընդունէ մաքսային օրինագիծը:

ՄՇԱԿԻ՝ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹԻՒՆՑ

9 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Օգոստոսի 8-ին Թագաւոր Կայսրը, Թագուհի Կայսրուհի Ալեքսանդրա Ֆեօդորովնա, հէլլենական թագուհին, յունական արքայադուրի Արգէյէ, Մեծ-Իշխանուհի Մարիա Պալովնա, Մեծ-Իշխանուհի Ելէնա Վաղիմիրովնա, Մեծ-Իշխաններ Միխայիլ Նիկոլայիւն եւ Սէրգէ Միխայիլիւն եւ Բառաէն-բէրգեան Իշխանուհին իր դստեր՝ Իշխանուհի Ալիսայի հետ Կայսրական «ՍՏԱՃԱՐԴ» զբօսանաւով զուրա եկան զէպի ծովը՝ ներկայ լինելու ծովային զօրամարտանքին, որ երէկ վերջացաւ մի զօրաբաժին ափ հանելով չխեղներում Բիօրիէի հանդէպ: «ՍՏԱՃԱՐԴ» զբօսանաւը, տեղ հասնելուց յետոյ, խորիսի գրեց: «СВѢТЛАН» նաւից «ՍՏԱՃԱՐԴ» եկան Մեծ-Իշխաններ Վաղիմիր Ալեքսանդրովիչ, Կիրիլ Վաղիմիրովիչ, Անդրէյ Վաղիմիրովիչ եւ Ալեքսէյ Ալեքսանդրովիչ: Զօրքերը ափ զուրա հանելուց յետոյ՝ տեղի ունեցան զօրաւիր իջեցումն եւ աղօթք, իսկ 8½ ժամին— Բարձրագոյն ճաշկերոյթ: Օգոստոսի 9-ին Նոյն Մեծութիւնները եւ Նոյն Բարձրութիւնները վերադարձան Պետերբուրգ:

Կիրիլ Վաղիմիրովիչ, Միխայիլովիչ, Սոփուս եւ Պրիպլեստիւմ ջրերի մակերեսովին այնքան ցածրացել է, որ դժուարացել է նաւապետութեանը: Զրի մակերեսովին Կիրիլովիչ մէկ կիւնիկ մօտ 0,89 սաժէն ցածր է սովորականից: Զերմութեան առաժանը յանկարծ ընկաւ: մինչեւ 150/0. Երեւնապէս գալիս են անձրեւներ:

ՊԱՐԻՉ: Ասում են, թէ Ֆրանս-թիւրքական ընդհարման պատճառով «Պատարը» չըլանաւ: Երէկ ճանապարհ ընկաւ զէպի թիւրքական ափերը, ուր նրան ուղեկցելու համար օպաւսում է մի ծովային զիվիզիս:

ԼՕՆԴՈՆ: «Բէյտէրի գործակալութեան» հաղորդում են Սմալթէլից, օգոստոսի 8-ից, թէ մի քանի օր առաջ գնապետ Բէրկէր եւ մասիսօր Պրիւկաֆին յանկարծակի յարձակվեցին Գաւրոօկի զօրաբաժնի վրա Դօրիւնբէրգի մօտ:

մընէ: Առաջին կարգին վրա eau-forte-ի լայն գծերով կողով մը՝ որուն քով կին մը քուրկերու կոյսին վրա կըստ զանազան կը գտաւ: Խղկիկ (Baraque) սանդուղիներուն վրա պտերի աղջիկ մը մեկամաղձօրէն իր մօրը աշխատութիւնը կը դիտէ: Խղկիկն դառն առջեւ սիւրէթը կանխատիւ կնոջ մը որ աղիկ մը իր թեւերուն մէջ առած է: Պատկերին ալ կողմը, խորերուն մէջ քանի մը անգամից տունը կը բարձրանան, որոնց առջեւ ձի մը տաժանօրէն կը քաշէ քար բարձած կառք մը: Երկրորդ պատկերը երկու մեղուհիներ են, որ կէս գիշերվան ճաշը ապահովող մարդուն կը սպասեն անձկութեամբ: Մէկը ձեռքը մէջքին դրած է շարժումով մը՝ որ հպարտ պիտի ըլլար եթէ իսկապէս navarra կըլլար: Միւսը գլուխը կէս մը մէկ կողմ ծռած է՝ դէմքին ճգնելով տալ փորձի արտայայտութիւն մը: Երկուքին աշուրներուն մէջ կը վառին բռնազօրեղի, կեղծուած հեշտանքի մը մարմունց ցոլեքը: Պ. Շահին ցուցադրած է նաեւ 3 գծագրութիւն: Առաջինը ապուրի բաշխումին étude-ը: Երրորդը ապալատակի պոստիկ մը, որ բանալին ձեռքին մէջ նուազ փարթամ ու նըւազ քաղաքաւոր քան առաջինները՝ ճամբան անկիւնը դարանած կը սպասէ անոր՝ որ պիտի գայ իրեն հետ անցուած ժամկան մը հաճաքին փոխարէն իրեն հայրայիթի վաղվան կերակուրը:

Տեղական

Электротечатня Грузин. Изд. Т—ва, Б.-Ванская ул.